

Վեցերորդ հաղորդում

**Քրիստոսը՝ որպես մեր շաբաթ օրվա հանգիստը,
որի նախատիպը Քանանի բարի երկիրն է**

Գրվածքների ընթերցում. Եբր 3:7–4:13

I. Եթե ուզում ենք պատշաճորեն հասկանալ շաբաթ օրվա հանգիստը Եբրայեցիներին ուղղված թղթում, պետք է իմանանք Աստվածաշնչում շաբաթ օրվա հանգստի մասին առաջին հիշատակման նշանակությունը՝ Ծնդ 2:2-3.

Ա. Աստված յոթերորդ օրը հանգստացավ, քանի որ ավարտեց Իր աշխատանքն ու բավարարված էր. Աստծու փառքը դրսևորվեց, քանի որ մարդն ուներ Նրա պատկերը, և շուտով գործադրվելու էր Նրա իշխանությունը՝ Նրա տիրապետությամբ՝ Նրա թշնամուն հնազանդեցնելու համար՝ 1:26:

Բ. Եբր երկրի վրա մի իրավիճակ է լինում, որում մարդն արտահայտում է Աստծուն և ներկայացնում Աստծուն, այդ իրավիճակն Աստծու համար շաբաթ օրվա հանգիստ է. շաբաթ օրվա հանգիստը պարզապես այն է, որ Աստված բավարարվում է Իր սրտի ցանկության մեջ՝ խխ. 26-28, Եբր 2:6-8ա:

Գ. Աստծու յոթերորդ օրը մարդու առաջին օրն էր. ստեղծվելուց հետո մարդը ոչ թե միացավ Աստծու աշխատանքին, այլ մտավ Աստծու հանգստի մեջ. մարդը ստեղծվեց ոչ թե աշխատելու, այլ Աստծով բավարարվելու և Աստծու հետ հանգստանալու համար՝ հմմտ Մտք 11:28-30:

Դ. Շաբաթ օրը խորհրդապատկերում է այն, որ Աստված ամեն ինչ արել է, ամեն ինչ ավարտել ու ամեն ինչ պատրաստել, և որ մարդը պետք է իր ողջ աշխատանքը դադարեցնի. շաբաթ օրը պահել նշանակում է դադարեցնել մեր աշխատանքը և ընդունել Աստծուն ու այն ամենը, ինչ Նա կատարել է մեզ համար՝ որպես մեր վայելքը, հանգիստն ու բավարարությունը. սա Աստծու տնտեսությունն է՝ Ելց 20:8:

Ե. Նոր Երուսաղեմը կլինի Աստծու վերջնական ու հավիտենական շաբաթ օրվա հանգիստը, որովհետև այնտեղ բոլոր փրկագնված սրբերը լիովին կարտահայտեն Աստծուն փառքի մեջ և Աստծու իշխանությամբ հավիտյան կթագավորեն՝ Հյտ 21:10-11, 22:1, 4ա, 5բ:

II. Շաբաթ օրվա հանգիստը Քրիստոսն է՝ որպես մեր հանգիստը, որի նախատիպը Քանանի բարի երկիրն է (Երկ Օր 12:9, Եբր 3:7–4:13). Քրիստոսը սրբերի հանգիստն է երեք փուլով.

Ա. Եկեղեցու դարաշրջանում երկնային Քրիստոսը՝ Նա, ով արտահայտել, ներկայացրել ու բավարարել է Աստծուն, և ով հանգստանում է Իր աշխատանքից և նստած է երկինքներում՝ Աստծու աջ կողմը, մեր հոգում եղող մեր հանգիստն է (Մտք 11:28-29). Եբր 4:9-ի շաբաթ օրվա հանգիստը Քրիստոսն է՝ որպես մեր հանգիստը, ում նախատիպը Քանանի բարի երկիրն է՝ Երկ Օր 12:9, Եբր 4:8:

ՔՐԻՍՏՈՍԸ՝ ՈՐՊԵՍ ՍԵՐ ՇԱԲԱԹ ՕՐՎԱ ՀԱՆԳԻՍԵԸ

- Բ. Հազարամյա թագավորության մեջ, երբ Սատանան այս երկրից հեռացված լինի (Հյտ 20:1-3), Աստված կարտահայտվի, կներկայացվի և կբավարարվի Քրիստոսի և հաղթող սրբերի կողմից. այդժամ Քրիստոսը՝ թագավորությամբ հանդերձ, ավելի լիարժեք հանգիստ կլինի հաղթող սրբերի համար, որոնք կլինեն Նրա համաթագավորները (Խխ. 4, 6) և կկիսեն ու կվայելեն Նրա հանգիստը:
- Գ. Նոր երկնքում և նոր երկրում, երբ բոլոր թշնամիները, ներառյալ մահը՝ վերջին թշնամին, Նրան ենթարկված լինեն (Ա Կրթ 15:24-27), ամենահաղթ Քրիստոսը ամենալիարժեք կերպով հավիտյան հանգիստը կլինի Աստծու բոլոր փրկագնածների համար:
- Դ. Եբր 4:8-9-ում հիշատակված շաբաթ օրվա հանգիստը վերաբերում է Քրիստոսին՝ որպես մեր հանգստի, առաջին երկու փուլերում, և հատկապես երկրորդում, հանգիստ, որը մեզ համար մնում է, որպեսզի ջանադրաբար փնտրենք և դրա մեջ մտնենք.
 - 1. Առաջին երկու փուլերի հանգիստը պարզ է Տիրոջը ջանադրաբար փնտրողների համար, որոնք լիարժեքորեն վայելում են Նրան և դրա շնորհիվ հաղթողներ դառնում. երրորդ փուլի հանգիստը ոչ թե պարզ է, այլ բոլոր փրկագնվածներին հատկացված լիարժեք բաժին:
 - 2. Մեր հանգիստը լինելու երկրորդ փուլում Քրիստոսը կտիրի ողջ երկրին՝ որպես Իր ժառանգությանը (Սղմ 2:8, Եբր 2:5-6) և հազար տարի այն Իր թագավորությունը կդարձնի՝ Սղմ 2:8, Եբր 2:5-6:
 - 3. Քրիստոսի մեր հանգիստը լինելու երկրորդ փուլում Նրա բոլոր հաղթող հավատացյալները, որոնք Նրան են փնտրում ու վայելում են Նրան՝ որպես իրենց առաջին փուլի հանգստի, կմասնակցեն Նրա՝ հազարամյայի թագավորմանը (Հյտ 20:4, 6, Բ Տմթ 2:12). նրանք կժառանգեն երկիրը (Մտթ 5:5, Սղմ 37:11, Դկս 19:17, 19) և կմասնակցեն իրենց Տիրոջ ուրախությանը (Մտթ 25:21, 23):

III. Մենք պետք է ուշադրություն դարձնենք Մտթ 11:28-30-ում Տիրոջ ասածին. «Ինձ մոտ եկեք, ո՛վ բոլոր տքնողներ ու բեռնավորվածներ, և ես ձեզ հանգիստ կտամ: Իմ լուծը ձեզ վրա առեք և Ինձնից սովորեցեք, որովհետև ես հեզ եմ ու սրտով խոնարհ, և ձեր շնչերի համար հանգիստ կգտնեք: Քանի որ Իմ լուծը հարմար է, ու Իմ բեռը՝ թեթև».

- Ա. Մա ոչ միայն այն տքնանքին է վերաբերում, որը օրենքի պատվիրաններն ու կրոնական կանոնները պահելու պայքարն է, այլև այն տքնանքին, որն ամեն գործում հաջողակ լինելու մաքառումն է. յուրաքանչյուր ոք, ով այսպես տքնում է, միշտ խիստ բեռնավորված է լինում:
- Բ. Հանգիստը ոչ միայն օրենքի կամ կրոնի և որևէ աշխատանքի կամ պատասխանատվության ներքո տքնելուց ու դրանց հոգսից ազատվելուն է վերաբերում, այլև կատարյալ խաղաղությանն ու լիարժեք բավարարությանը:
- Գ. Տիրոջ լուծը մեզ վրա առնելը Հոր կամքն ընդունելն է. դա ոչ թե օրենքի կամ կրոնի առջև ինչ-որ պարտավորությամբ ուղղորդվելը կամ կառա-

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՈՒՐՎԱԳՐԵՐ

վարվելն է կամ էլ ինչ-որ աշխատանքի ստրուկները լինելը, այլ այն, որ Հոր կամքը զսպում է մեզ:

- Դ. Տերն այսպիսի կյանք էր ապրում. Իր Հոր կամքից բացի՝ որևէ այլ բանի համար չէր հոգում (Հվի 4:34, 5:30, 6:38). Նա լիովին Հոր կամքին էր ենթարկվում (26:39, 42). ուստի մեզ խնդրում է Իրենից սովորել (Եփս 4:20-21):
- Ե. Հեզ կամ մեղմ լինելը հակառակությանը չընդդիմանալն է, իսկ խոնարհ լինելը՝ մեծամիտ չլինելը: Նա լիովին Իր Հոր կամքին էր ենթարկվում՝ Իր համար որևէ բան անել չկամենալով և Իր համար որևէ բան ձեռք բերել չակնկալելով: Ուստի իրավիճակներից անկախ՝ Նրա սրտում հանգիստ կար. Նա լիովին բավարարված էր Հոր կամքով:
- Զ. Հանգիստը, որը գտնում ենք Տիրոջ լուծն ընդունելով և Նրանից սովորելով, մեր շնչերի համար է: Դա ներքին հանգիստ է և ոչ թե իր բնությանը սուկ արտաքին մի բան:
- Է. Տիրոջ լուծը Հոր կամքն է, իսկ Նրա բեռը՝ Հոր կամքը կատարելու աշխատանքը: Այսպիսի լուծը հարմար է, տհաճ չէ, իսկ այսպիսի բեռը թեթև է, ծանր չէ՝ հմմտ Մղբ 3:14:
- Ը. Այն, որ Նրա լուծը հեշտ է, նշանակում է, որ Նրա լուծը՝ Հոր կամքը, լավն է, բարի, մեղմ, մեղմաբարո, հարմար, դուրեկան՝ ի հակադրություն կոշտ, կոպիտ, խիստ, տհաճ լինելուն:

IV. Ելք 31:12-17-ը ցույց է տալիս, որ շաբաթ օրը հետևում է խորանը կառուցելու պատվերին.

- Ա. «Անպայման պահեք Իմ շաբաթները, քանի որ դա Իմ ու ձեր միջև ձեր բոլոր սերունդների ընթացքում եղող նշան է, որպեսզի իմանաք, որ Ես Եհովան եմ, ով սրբացնում է ձեզ... Ուստի Իսրայելի զավակները թող պահեն շաբաթը, որպեսզի իրենց բոլոր սերունդների ընթացքում շաբաթը կատարեն որպես մշտնջենական ուխտ: Դա Իմ և Իսրայելի զավակների միջև հավիտենապես եղող նշան է. քանի որ վեց օրում Եհովան ստեղծեց երկինքներն ու երկիրը և յոթերորդ օրը դադար առավ ու հանգստացավ» խխ. 13, 16-17:
- Բ. Յոթերորդ օրը Աստված «դադար առավ ու հանգստացավ (կամ «թարմացավ»)». մարդն Աստծու համար թարմացում էր, որովհետև մարդն Աստծու պատկերով ստեղծվեց ու հոգով, որպեսզի կարողանա հաղորդակցվել Աստծու հետ և լինել Աստծու ընկերն ու զույգը:
- Գ. Անհրաժեշտ է տեսնել հետևյալ աստվածային սկզբունքը. Աստված մեզ նախ՝ մատակարարում է վայելքով, և հետո՝ մենք Նրա հետ միասին աշխատում ենք. Աստծու հետ Նրա աշխատանքում մեկ լինելու համար պետք է վայելել Նրան:
- Դ. Պենտեկոստեին աշակերտները լցված էին Տիրոջ վայելքով. «Նրանք նոր զինով են արբած» (Գրծ 2:13). ապա Պետրոսն ու տասնմեկը կանգնեցին՝ Տիրոջ հետ աշխատելու՝ խ. 14:

- Ե. Աստծու դեպքում դա աշխատելու և հանգստանալու հարց է. մարդու դեպքում՝ հանգստանալու և աշխատելու. արդյունքում մենք աշխատում ենք Տիրոջ հետ՝ Նրա հետ մեկ լինելով:
- Զ. Որպես Աստծու ժողովուրդ՝ մենք պետք է մեզ վրա նշան կրենք, որ մենք Աստծու կարիքն ունենք՝ որպես մեր ուժի, եռանդի և ամեն ինչի, որպեսզի կարողանանք Նրա հետ միասին աշխատել՝ կառուցելու համար եկեղեցին՝ որպես Քրիստոսի Մարմինը. սա պատվում և փառավորում է Նրան՝ Ա Կրթ 15:10, 58:
- Է. Նշանը, որը կրում ենք, այն է, որ մենք առաջին հերթին հանգստանում ենք Աստծու հետ, վայելում Աստծուն, թարմանում Աստծով և լցվում Աստծով. հետո աշխատում ենք Նրա հետ մասին, Նրա, ով մեզ լցնում է Իր հետ ունեցած միասնության մեջ. սա Աստծու հետ կնքած հավիտենական ուխտ է, հավիտենական պայմանագիր:

V. Քրիստոսին՝ որպես բարի երկրի, վայելելու միջոցն Աստծու կենդանի և գործուն խոսքն է, որը «ամեն երկսայրի սրից հատու [է] և թափանցում է մինչև խկ շնչի ու հոգու, հողերի ու ոսկրածուծի բաժանումը և կարող է զատորոշել սրտի մտքերն ու մտադրությունները»՝ Եբր 4:12.

Ա. Իսրայելի զավակները մեր՝ նորկտակարանյան հավատացյալներիս (Ա Կրթ 10:6ա, 11)՝ Աստծու լիակատար փրկությանը մասնակցելու նախատիպն են.

1. Առաջին փուլում մենք ընդունում ենք Քրիստոսին, փրկագնվում և աշխարհից ազատվում, ճիշտ ինչպես Իսրայելի զավակներն ազատվեցին Եգիպտոսից:
 2. Երկրորդ փուլում Տիրոջը հետևելիս թափառականներ ենք դառնում, ճիշտ ինչպես իսրայելացիները թափառում էին անապատում. մեր թափառելը միշտ մեր շնչում է տեղի ունենում:
 3. Երրորդ փուլում հաղորդ ենք լինում Քրիստոսին և լիարժեքորեն վայելում Նրան, ճիշտ ինչպես Իսրայելի զավակները հաղորդ եղան բարի երկրի հարստություններին ու վայելեցին դրանք. սա փորձառաքար ապրում ենք մեր հոգում:
 4. Եբրայեցի հավատացյալները տարակուսում էին իրենց մտքում, թե ինչ պետք է անեն իրենց եբրայական կրոնը: Նրանց մտքում այս տարակուսելը հենց իրենց շնչում թափառելն էր, ոչ թե իրենց հոգում Քրիստոսին փորձառաքար ապրելը:
- Բ. Եբրայեցիներին ուղղված թղթի հեղինակը եբրայեցի հավատացյալներին խորհուրդ էր տալիս, որ չտատանվեին իրենց շնչի թափառումով, շնչի, որը պետք է մերժեին, այլ առաջանային դեպի իրենց հոգին՝ երկնային Քրիստոսին հաղորդ լինելու և վայելելու համար.
1. Այն նույն Քրիստոսը, ով երկնքում նստած է գահին (Հռմ 8:34), այժմ նաև մեր մեջ է (Խ. 10), այսինքն՝ մեր հոգում (Բ Տմբ 4:22), որտեղ Աստծու բնակատեղն է (Եփս 2:22):

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՈՒՐՎԱԳՐԵՐ

2. Բեթելում՝ Աստծու տանը, Աստծու բնակատեղում, որը երկնքի դարպասն է, Քրիստոսը երկիրը երկնքին միացնող ու երկինքը երկիր բերող սանդուղքն է (Ծնդ 28:12-17, Հվի 1:51). քանի որ մեր հոգին այսօր Աստծու բնակության վայրն է, այն հիմա երկնքի դարպասն է, որտեղ Քրիստոսն այն սանդուղքն է, որ մեզ՝ երկրի վրա եղող մարդկանց, երկնքին է միացնում և երկինքը բերում մեզ:
 3. Այդ պատճառով ամեն անգամ, երբ մեր հոգուն ենք դառնում, մենք ներս ենք մտնում երկնքի դարպասով և երկնքում եղող շնորհքի գահին հավում Քրիստոսի՝ որպես երկնային սանդուղքի միջոցով՝ Եբր 4:16:
 4. Տատանվող երբայեցի հավատացյալները թափառում էին իրենց շնչում և անտեսել էին իրենց հոգին, բայց նոր ուխտը բացարձակապես մեր հոգում գտնվելն է, այլ ոչ թե մեր շնչում՝ Հռմ 8:16, Բ Տմբ 4:22, Գղտ 6:18:
- Գ. Երբայեցի հավատացյալների շունչը՝ իր տարակուսող մտքով, Աստծու փրկության ճանապարհին վերաբերող կասկածներով և սեփական շահի հանդեպ ուշադրությամբ հանդերձ, պետք է Աստծու կենդանի, գործուն և ներթափանցող խոսքով ջախջախվեր, որպեսզի նրանց հոգին բաժանվեր շնչից՝ Եբր 4:12.
1. Ինչպես ոսկրածուծն է հողերի խորքում թաքցված, այնպես էլ՝ հոգին շնչի մեջ. ճիշտ ինչպես ոսկրածուծը հողերից բաժանելու համար պետք է նախ հողերը ջախջախվեն, այնպես էլ հոգին շնչից բաժանելու համար պետք է շունչը ջախջախվի՝ Ա Պտ 3:4:
 2. Ամեն անգամ, երբ կարդում ենք Աստվածաշունչը, այն պետք է լինի կենդանի, եռանդուն և բավականաչափ սուր, որպեսզի մեր շունչը մեր հոգուց բաժանի և մեր մտքերն ու մտադրությունները զատորոշի՝ բացահայտելով, թե որոնք են «ես»-ից ու դրա համար և որոնք՝ Աստծուց ու Աստծու համար. մենք պետք է խոսքը խառնենք հավատքի հետ՝ հոգում արվող ամենայն աղոթքի միջոցով, որպեսզի այն լինի կենդանի և գործուն՝ Եբր 4:2, Եփս 6:17-18:
 3. Աստծու կենդանի խոսքը պետք է թափանցի մեր էության մեջ և ազատի մեզ մեր տարակուսող մտքից ու թափառող շնչից՝ մեզ բերելով մեր հոգում Քրիստոսի՝ որպես շաբաթ օրվա հանգստի մեջ. մենք չպետք է լինենք նրանք, ովքեր տատանվում են՝ տրվելով իրենց շնչի թափառելուն, այլ պետք է ուրանանք մեր շունչը և մղվենք մեր հոգու մեջ մտնելու, որպեսզի հաղորդ լինենք երկնային Քրիստոսին և վայելենք Նրան, որպեսզի կարողանանք մասնակցել թագավորության հանգստին Նա հազարամյալում Նրա թագավորման մեջ: